Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 736 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

1.	**Ծրագրի նպատակը**	Վերանորոգել «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Աչաջուր բնակավայրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքը, որի արդյունքում կստեղծվեն հարմարավետ պայմաններ մանկապարտեզի սաների առօրյան կազմակերպելու համար:
2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	**Բարեգործը**	Հայ օգնության ֆոնդ, Նյու Յորք, ԱՄՆ
4.	**Ծրագիրը կատարողը**	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0010, Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ՝ 02517115):
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, բնակավայր Աչաջուր, փողոց 6, շենք 4: Բնագավառը՝ սոցիալական
6.	**Ծրագրի բյուջեն**	58,636,627 դրամ
7.	**Բարեգործություն ստացողը**	«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Աչաջուր բնակավայրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, համայնք Իջևան, բնակավայր Աչաջուր, փողոց 6, շենք 4, ՀՎՀՀ՝ 07611391)

8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	2025 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2026 թվականի հուլիսի 30-ը
9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Աչաջուր բնակավայրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի վերանորոգում՝ 58,636,627 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2026 թվականի հուլիսի 30-ը ընկած ժամանակահատվածում:
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Աչաջուր բնակավայրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 58,636,627 դրամ առանց ավելացված արժեքի հարկի:
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**	Չեն նախատեսվում
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**	Ծրագրի իրականացման շրջանակներում Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղը համագործակցելու է Տավուշի մարզպետի աշխատակազմի և Իջևանի համայնքապետարանի հետ:
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Վերահսկողությունը կատարվելու է Հայ օգնության ֆոնդի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

21.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ